


891.99v

U - 85



Արար



ՀՐԱԶԱԼԻ
ՄԱՎԱՌՆԱԿԸ



891.995
Q-85

MUSEUM

891.99.5.

Q-85

44.

Ա. Բ. Ա. Բ. Ս


ՀՐԱՇԱԼԻ ՍԱՎԱՌՆԱԿԸ

Ն Կ Ա Ր Ն Ե Ր
Մ Բ Ա Ղ Կ Ա Ս Ա Ս Բ Յ Ա Ն Ի

Պ Ե Տ Շ Ր Ա Տ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937



Հ Ր Ա Շ Ա Լ Ի Ս Ա Վ Ա Ռ Ն Ա Կ Ը

(ԿԱՐՄԻՐ ՀԵՔՅԱԹ)

Հոկտեմբերիկներին, վոր պիտի մե-
ծանան ու սիրապետեն գիտությանն ու
սեխնիկային:

Նա ծնվել է ու ապրում է կարմիրների աշ-
խարհում:

Մի փոքրիկ տղա յե. անունը Սպարտակ, նա
գրել կարգալ նոր է սովորում, բայց շատ վարժ
նկարում է:


Սպարտակն իսկի չի սիրում գիշերը, միշտ դժգո-
հում է, յերբ մայրիկը նրան պառկեցնում է քնե-
լու: Նա ուզում է միշտ ցերեկ լինի, վոր ինքն
ազատ խաղա, վազվզի ու նկարի:

Սպարտակն ապրում է մայրաքաղաքում, վոր-
տեղ ամեն որ նա տեսնում է զնացք, տրամվայ,
ավտո ու զրանք նմանեցնում է փայլուն բզեզների,
վոր սլանում են փողոցներով: Բայց ամենից շատ
նա սիրում է սավառնակը, վոր խռչում է ողի մեջ
առանց հենարանի և այն ել այնպես արագ: Սպար-



1654

38



տակը յերբ լսում ե մոտոռի բուռցը, դուրս ե թռչում, ձեռքը դնում ե ճակատին ու աչքերը պտտացնելով բզզացող սավառնակի յետեվից, սուլում ե ու աղաղակում:

— Ախ, ինչ կլիներ յես ել թռչելի այդ փայլուն բզեզիկի մեջքին: Իսկ բզեզիկը, ա յն մետաղե փայլուն սավառնակն ե, վոր պատրաստում են այնքան շատ խորհրդային գործարաններում:


Սպարտակը հանգիստ չի նստում. հենց վոր մանկապարտեզից տուն ե գալիս, թղթեր ե կտրատում, փայտեր ե տաշտշում ու ամեն որ սավառնակ ե շինում:

Մի որ ել հայրիկի բերած գրքում նա տեսավ նկարած մի մեծ սավառնակ և ուրախությունից ճչաց.

— Հայրիկ, գտա, յես հիմի հենց սրանման իսկական սավառնակ կսարքեմ: Ամբողջ որն աշխատում եր, շուրջը փռած թղթի, թիթեղի փայտեր, կտորներ: Նա քրտնել եր, սավառնակ եր շինում, այդ աշխատանքներին հայրիկն ել ոգնեց, սավառնակը պատրաստ եր, ամեն ինչ լավ եր. բայց ափսոս, վոր չեր թռչում: Թե իմանայիք նա ի՞նչպես եր ուզում հնարը գտնել, վոր սավառնակը թռչեր: Նա ուզում եր շուտով մեծանալ ու սովորել ողաչուններից...

Յերբ պառկեց քնելու, նրա փոքրիկ գլխում այնքան մտքեր կային: Մենակ սավառնակը չեր, վոր նրան զբաղեցնում եր, նա ուրիշ շատ բաներ ել գիտեր:

Մանկապարտեզում եր լսել, հետո հայրիկն եր պատմում ու նա հաստատ գիտեր, վոր կարմիրները չեն սիրում բուրժվաներին, վորովհետեվ բուրժվա-



ները շահագործում և ճնշում են բանվորներին՝ Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում. — բուրժուականների աշխարհում:

Սպարտակը նկարելու ժամանակ միշտ յերկու սահման երգծում, մեկը՝ կարմիրմատիտով — ասում եր՝ այստեղ կարմիրներ են, իսկ մյուսը՝ թողնում երսպիտակ — ասում եր — այնտեղ սպիտակներն են: Սպարտակը մտածում եր գնալ բուրժուականների աշխարհը, պատմել պրոլետարներին ու նրանց յերեխաներին, վոր կարմիրների աշխարհն ամենից լավ աշխարհն ե: Նա համբերություն չուներ, յերկար սպասելու, ուզում եր շուտ գնալ, իսկ ամենից շուտ կարելի յեր գնալ սավառնակով:

ՄՊԱՐՏԱԿԻ ՅԵՐԱԶԸ

Արեվ եր, պայծառ արեվ, մարդիկ ուրախ եյին, ուրախ եյին բոլոր յերեխաները: Սավառնակների տոնն եր: Այնքան սավառնակներ կային յերկնքում:

Սպարտակը հագել եր ողաչույի շորեր, նստել եր սավառնակի վրա, դեկի մոտ: Հանկարծ մեքենան բռնաց, պրոպելլերը պտտվեց, ողաչուն դեկը բռնեց ու սավառնակը թռավ: Ողաչուն Սպարտակն եր. այնպես ել արագ եր թռչում մեքենան, վոր վոչ մի սավառնակ չեր հասնում նրան: Չեյին հասնում վոչ բազեն, վոչ արծիվը: Մարերը, քաղաքները վոտքի տակ մանրացել եյին մրջյունների պես:

Արեվը կրակոտ շրթունքները բացեց և հարցեց ծիծաղելով:

— Վհրաեղից ես դու և ո՛ւր ես գնում փոքրիկ ողաչու:

Նա իսկի չվախեցավ արևից ու պատասխանեց հպարտությամբ:



— Յես կարմիրներից եմ, և արդեն փոքրիկ չեմ, գնում եմ բուրժիաների աշխարհը:

Արեվը ժպտալով լուսավորեց նրա ճանապարհը: Ամպերը, քամիները, թռչունները հարցնում էին թե ո՞ւր եր գնում փոքրիկ ողաչուն, իսկ Սպարտակը դեկի մոտ նստած՝ ժամանակ չունեի պատասխանելու:

Այնքան բարձր եր թռչում սավառնակը, իսկ ողաչուն դեկավարում եր հեշտ:

Նա հասավ բուրժիաների քաղաքը ու իջավ բանվորական թաղում:

Յերեխաներն աղմուկով դուրս վազեցին տներից և շրջապատեցին նրան ու տեսան կարմիր աստղը կրծքին՝ մի ողաչու:

— Սա կարմիր է, — աղաղակեցին նրանք:

— Յես կարմիրներից եմ, կամաց... իմ սավառնակով եմ յեկել...

Նա պատմում եր յերեխաներին կարմիրների աշխարհից, իսկ յերեխաները հասկանում էին նրա լեզուն:

Այդ ժամանակ վոստիկանը նկատեց Սպարտակին, հրացանը բռնեց դեպի նրան, կրակեց, բայց գնդակը չկպավ:

Նա պատմում եր անվախ, համարձակ, իսկ յերեխաները լսում էին նրան զարմացած: Արեվը ժպտում եր այնպես ջերմ:

— Մենք սավառնակներ ենք սարքում, նավեր, դնացքներ, բոլորը մերն են, մենք ուրախ ենք ապրում, բուրժիաներ չկան մեր յերկրում:

Յերեխաները լսում էին հիացած:

Մի անգլիացի պիոներ իր ֆոտո ապարատով նրկարում եր Սպարտակին ու նրա փայլուն սավառնակը:

Վոստիկանները շատացան ու սկսեցին կրակել...
Վոչ մի գնդակ չդիպավ Սպարտակին: Սպարտակը կենդանի յեր ու կայտառ: Յերեսխաները նրան անվանեցին «հրաշալի սավառնակի, հրաշալի ողաջու»...

Հետ վերադառնալիս նա վերցրեց իր սավառնակի մեջ բանվորների մի խումբ յերեսխաների:


Նրանք գնում եյին տեսնելու կարմիրների աշխարհը: Իսկ անգլիացի պիոները նրանց նկարում եր:

* * *

Սպարտակը վեր թռավ, քրտնել եր, վոչ մի պատմու թյուն, կամ հեքյաթ, այնքան գեղեցիկ չեր յեղել, ինչպես այդ յերազը: Նա վազեց դեպի իր սավառնակը, վերցրեց ձեռքի վրա ու աղաղակեց:

— Մի որ ել յես քեզ հետ կթռչեմ իմ սիրուն, իմ հրաշալի սավառնակ:

Թե իմանայիք, ինչպես եր ուզում Սպարտակը շուտ մեծանալ և ողաջու դառնալ:



1654
38

04

« Ազգային գրադարան



NL0398696

ԳԻՆԸ 60 ԿՈՊ



Արակս
ЧУДЕСНЫЙ САМОЛЕТ
Гиз Арм.ССР при ЦК ЛКСМА. ЕРЕВАН

7252